# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 263 - Ա

«ՍԻԹԻ ՕՖ ՍՄԱՅԼ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՔԱՂՑԿԵՂ ԵՎ ԱՐՅԱՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

---

Հիմք ընդունելով «Բարեգործության մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերը՝

1. Բարեգործական որակել «Սիթի օֆ սմայլ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 186,575,241 դրամ արժողությամբ «Աջակցություն քաղցկեղ և արյան հիվանդություն ունեցող անձանց» ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

2. Սահմանել, որ «Սիթի օֆ սմայլ» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 00464744) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են «Աջակցություն քաղցկեղ և արյան հիվանդություն ունեցող անձանց» ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Ազադ Ֆարմասյութիքլզ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ (ՀՎՀՀ՝ 02235575) 2025 թվականի հունվարի 30-ին կնքված պայմանագրի շրջանակներում 2025 թվականի ապրիլի 17-ից մինչև 2026 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում դեղորայքի ձեռքբերման գործարքը՝ 3,333,333.34 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Ալֆա-Ֆարմ Իմպորտ» փակ բաժնետիրական ընկերության հետ (ՀՎՀՀ՝ 02606482) 2024 թվականի հունվարի 20-ին կնքված պայմանագրի շրջանակներում 2025 թվականի ապրիլի 17-ից մինչև 2026 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում դեղորայքի ձեռքբերման գործարքը՝ 5,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3) «Աստերիա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ (ՀՎՀՀ՝ 01537077) 2025 թվականի փետրվարի 6-ին կնքված պայմանագրի շրջանակներում 2025 թվականի ապրիլի 17-ից մինչև 2026 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում դեղորայքի ձեռքբերման գործարքը՝ 33,333,333.34 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

4) «Էյ Բի Սի Ֆարմացիա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ (ՀՎՀՀ՝ 00129804) 2024 թվականի հունվարի 20-ին կնքված պայմանագրի շրջանակներում 2025 թվականի ապրիլի 17-ից մինչև 2026 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում դեղորայքի ձեռքբերման գործարքը՝ 5,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

5) «ԷՆՋի հոլդինգ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ (ՀՎՀՀ՝ 00240216) 2025 թվականի հունվարի 20-ին կնքված պայմանագրի շրջանակներում 2025 թվականի ապրիլի 17-ից մինչև 2026 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում դեղորայքի ձեռքբերման գործարքը՝ 10,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

6) «Թեոֆարմա Իմպորտ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ (ՀՎՀՀ՝ 00471216) 2024 թվականի հունվարի 20-ին կնքված պայմանագրի շրջանակներում 2025 թվականի ապրիլի 17-ից մինչև 2026 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում դեղորայքի ձեռքբերման գործարքը՝ 82,975,241 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

7) «Մոնոո Ֆարմ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ (ՀՎՀՀ՝ 00243619) 2025 թվականի փետրվարի 10-ին կնքված պայմանագրի շրջանակներում 2025 թվականի ապրիլի 17-ից մինչև 2026 թվականի դեկտեմբերի 31-ն

ընկած ժամանակահատվածում դեղորայքի ձեռքբերման գործարքը՝ 5,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

8) «Ֆարմատեք» փակ բաժնետիրական ընկերության հետ (ՀՎՀՀ՝ 01818051) 2024 թվականի փետրվարի 20-ին կնքված պայմանագրի շրջանակներում 2025 թվականի ապրիլի 17-ից մինչև 2026 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում դեղորայքի ձեռքբերման գործարքը՝ 25,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

9) «Նունե Եղիազարյան Պլյուս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ (ՀՎՀՀ՝ 00237505) 2025 թվականի հունվարի 20-ին կնքված պայմանագրի շրջանակներում 2025 թվականի ապրիլի 17-ից մինչև 2026 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում դեղորայքի ձեռքբերման գործարքը՝ 8,333,333.33 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

10) «ԱՐՄԵՆԻԱ ԻՆԿԱՍԱՑԻՈՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ» փակ բաժնետիրական ընկերության հետ (ՀՎՀՀ՝ 02260596) 2019 թվականի հունիսի 20-ին կնքված եռակողմ պայմանագրի շրջանակներում 2025 թվականի ապրիլի 17-ից մինչև 2026 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում կանխիկ դրամի ընդունման, փոխադրման (տեղափոխման) և հաձնման բանկ կամ հակառակ ուղղությամբ, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում դրամապահոցներում ժամանակավոր պահպանության ծառայությունների մատուցման գործարքը՝ 1,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

11) «Երևան-Աուդիտ Կոնսալտ» փակ բաժնետիրական ընկերության հետ (ՀՎՀՀ՝ 02703411) 2018 թվականի սեպտեմբերի 1-ին կնքված պայմանագրի շրջանակներում 2025 թվականի ապրիլի 17-ից մինչև 2026 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում հաշվապահական հաշվառման ծառայությունների մատուցման գործարքը՝ 6,300,000 (ամսական 300,000 դրամ) դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Միթի օֆ սմայլ» բարեգործական հիմնադրամին՝ մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական

ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից կատարված աշխատանքների, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Երևան

28.04.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ